ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2021 թվականի N 118-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 02/11./32847-2021 հանձնարարականի, ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 69-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի ներքին կարգապահական կանոնակարգում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 28 կետի 10-րդ ենթակետից հետո լրացնել նոր 11-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը ապահովում է՝ սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատողի աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը և սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը օրը երկու անգամ՝ աշխատանքի ներկայանալիս և աշխատանքային օրվա ընթացքում՝ ընդմիջումից հետո, կազմակերպում է՝ աշխատողների ջերմության չափում՝ հեռահար, որը գրանցում է աշխատակազմի ջերմաչափման վերաբերյալ արդյունքների գրանցման գրանցամատյանում համաձայն Կանոններին կից՝ Ձև 1-ի:

37 և բարձր ջերմություն արձանագրվելու դեպքում արդյունքները անհապաղ տրամադրում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի կողմից կազմակերպվում է՝ օրական առնվազն 2 անգամ՝ մինչ աշխատանքի սկիզբը և ընդմիջումից հետո, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, ախտահանվում են տարածքի մակերեսները, այդ թվում դռների բռնակները, սեղանները, ընդհանուր օգտագործման պարագաները, ձեռքով հաճախակի հպվող այլ մակերեսներ՝ (էլեկտրական հոսանքի անջատիչներ, սարքավորումների բռնակներ, հեռակառավարման վահանակներ, ընդհանուր օգտագործման հեռախոսներ, համակարգիչներ, ստեղնաշարեր, մկնիկ և այլն) 70-90% սպիրտի հիմքով կամ այլ (թաղանթավոր վիրուսների նկատմամբ վիրուսասպան ակտիվությամբ օժտված) ախտահանիչ միջոցով, ախտահանման գործընթացի վերաբերյալ գրանցումների գրանցամատյանում համաձայն Կանոններին կից՝ Ձև 2-ի:»:

2) Կանոնակարգի 32 կետի 10-րդ ենթակետից հետո լրացնել նոր 11-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) աշխատանքի ներկայանալիս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարան ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:»:

3) Կանոնակարգի 61 կետից հետո լրացնել նոր 62-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«62. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի կողմից համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում, խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները անհապաղ գրավոր ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին: Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը՝ համայնքային ծառայողներ հանդիսացող աշխատողների դեպքում նշանակում է ծառայողական քննություն, իսկ մյուս աշխատողների նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ խախտում թույլ տված անձից պահանջելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու գրավոր բացատրություն:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից՝ եռօրյա (աշխատանքային) ժամկետում՝ քննարկվում է առերևույթ խախտում թույլ տված աշխատակցին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) հարցը:

Մինչև սույն կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 14
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 119-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, ***որոշում եմ.***

1. 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել անվճար տեղեր համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալ Լևոն Կոնդյանի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 19
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Աշոցք համայնքի ղեկավարի 2021 թվականի
հոկտեմբերի 19-ի N 119-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ

h/h	Հասցե	Մակերես (քմ)
1.	գյուղ Աշոցք, Հրապարակ 2	20
2.	գյուղ Բավրա, 6-րդ փողոց, 1 փակուղի, թիվ 1	15
3.	գյուղ Սարագյուղ, 1-ին փողոց, թիվ 11	15
4.	գյուղ Սիզավետ, 1-ին փողոց, թիվ 4	15
5.	գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, 2-րդ անցուղի, թիվ 6	15
6.	գյուղ Ղազանչի, 1-ին փողոց, թիվ 10	20
7.	գյուղ Մեծ Սեպասար, 1-ին փողոց, թիվ 23	20
8.	գյուղ Փոքր Սեպասար, 1-ին փողոց, թիվ 24	15
9.	գյուղ Կրասար, 8-րդ փողոց, թիվ 12	15
10.	գյուղ Զույգաղբյուր, 2-րդ փողոց, թիվ 7	15
11.	գյուղ Կարմրավան, 1-ին փողոց, թիվ 20	15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ E-mail: ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 120-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով, ***որոշում եմ***.

2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով ընտրությունների համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում ընդգրկված բնակավայրերում սահմանել տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 19
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 120-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը (հասցեն)	Տեղամասի բնութագիր
1	Սարագյուղ	Սարագյուղ գյուղի հիմնական դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Սարագյուղ, 2-րդ փողոց, թիվ 24	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 58 քմ, դուռը՝ արևելյան կողմում, երեք պատուհաններ՝ արևմտյան կողմում, թեքահարթակ չունի
2	Բավրա	Բավրա գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Բավրա, 3-րդ փողոց, 2 փակուղի, թիվ 1	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 90 քմ, դուռը՝ ապակեպատ, արևմտյան կողմում, հինգ պատուհաններ՝ արևելյան կողմում, թեքահարթակ չունի
3	Թավշուտ	Թավշուտ գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, թիվ 2	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 160 քմ, դուռը՝ ապակեպատ, հարավային կողմում, չորս պատուհաններ՝ արևմտյան կողմում, թեքահարթակ չունի
4	Սիզավետ	Սիզավետ գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Սիզավետ, 3-րդ փողոց, թիվ 4	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 54 քմ, դուռը՝ ապակեպատ, հարավային կողմում, երեք պատուհաններ՝ արևելյան կողմում, ունի թեքահարթակ
5	Ղազանչի	Ղազանչի գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Ղազանչի, 8-րդ փողոց, թիվ 12	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 60 քմ, դուռը՝ ապակեպատ, հյուսիս-արևելյան կողմում, երեք պատուհաններ՝ հարավ-արևելյան կողմում, թեքահարթակ չունի
6	Մեծ Սեպասար	Մեծ Սեպասար գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Մեծ	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 80 քմ, դուռը՝ ապակեպատ, հյուսիսային կողմում, երեք

		Սեպասար, 9-րդ փողոց, թիվ 1	պատուհաններ՝ հարավ-արևելյան կողմում, թեքահարթակ չունի
7	Փոքր Սեպասար	Փոքր Սեպասար գյուղի տարրական դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Փոքր Սեպասար, 1-ին փողոց, թիվ 41	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 160 քմ, դուռը՝ ապակեպատ, հարավ-արևմտյան կողմում, չորս պատուհաններ՝ արևելյան կողմում, թեքահարթակ չունի
8	Կրասար	Կրասար գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Կրասար, 1-ին փողոց, թիվ 16/1	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 162 քմ, դուռը՝ ապակեպատ, հյուսիս-արևմտյան կողմում, ինը պատուհաններ՝ հյուսիս-արևելյան կողմում, ունի թեքահարթակ
9	Աշոցք	Աշոցք գյուղի հանդիսությունների սրահի շենք, հասցե՝ գյուղ Աշոցք, 3-րդ փողոց, թիվ 2	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 140 քմ, դուռը՝ հարավ-արևելյան կողմում, երկու պատուհաններ՝ հարավ-արևմտյան կողմում, թեքահարթակ չունի
10	Աշոցք	Աշոցք գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Աշոցք, Վ. Ռուդակովի փողոց, թիվ 1	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 160 քմ, դուռը՝ ապակեպատ, հարավ-արևմտյան կողմում, չորս պատուհաններ՝ հյուսիս-արևմտյան կողմում, ունի թեքահարթակ
11	Զույգաղբյուր	Զույգաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Զույգաղբյուր, 6-րդ փողոց, թիվ 2	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 100 քմ, դուռը՝ ապակեպատ, հարավ-արևելյան կողմում, վեց պատուհաններ՝ հարավ-արևմտյան կողմում, թեքահարթակ չունի
12	Կարմրավան	Կարմրավան գյուղի հիմնական դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Կարմրավան, 1-ին փողոց, թիվ 8	Տեղամասի ընդհանուր մակերեսը՝ 50 քմ, դուռը՝ ապակեպատ, հարավ-արևելյան կողմում, երկու պատուհաններ՝ հյուսիս-արևելյան կողմում, թեքահարթակ չունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ